FULL LIFE
for each and everyone
ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Save the Children

ԱՆՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԳՐԻԳՈՐԻ ՄԱՄՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԵՐԵԽԱՅԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

(ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ)

Հանրամատչելի ձեռնարկ ծնողների համար

Հեղինակներ՝
Լոգոպեդներ Աննա Մալխասյան, Գրիգորի Մամյան

Ձեռնարկը պատրաստվել է «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության կողմից, «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության՝ «Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը տարածաշրջանային բնույթ ունի և իրականացվում է «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության կողմից միաժամանակ հինգ երկրներում՝ Ալբանիայում, Հայաստանում, Բոսնիա և Հերցեգովինայում (հյուսիսարևմտյան Բալկաններ), Վրաստանում և Կոսովոյում: Ծրագրի նպատակն է նպաստել հաշմանդամություն ունեցող երեխաների կարողությունների, ինքնուրույնության հմտությունների զարգացմանն ու հասարակության մեջ ներառելուն: Այն նաև նպատակ ունի աջակցելու ծնողներին և համախմբելու համայնքները՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար որակյալ ծառայությունների մատուցումը խթանելու գործում:

Հայաստանում ծրագրի գործընկերներն են «Լիարժեք կյանք» և «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունները: Ծրագիրն իրականացվում է 2016-2018 թթ. Երևանում, Արմավիրի և Արարատի մարզերում:

ՆԱԽԱԲԱՆ

Դեռևս Լ. Ս. Վիգոտսկին նշում էր, որ երեխայի խոսքի առաջնային գործառույթը շրջապատող աշխարհի հետ հաղորդակցության հաստատումն է: Ասել է թե՝ խոսքն ապահովում է մեր հաղորդակցությունը շրջապատողների հետ: Հաղորդակցությունը երկկողմանի գործընթաց է, որին մասնակից են իրար հաջորդող հաղորդագրություններ ստացող և ուղարկող առնվազն երկու մարդ: Մեր ամենօրյա գործողություններից ամենակարևորը հաղորդակցությունն է: Մենք միմյանց հետ հաղորդակցվում ենք մի շարք եղանակներով: Կրիսորալը (1992) ամփոփել է հաղորդակցման գլխավոր գործառույթը՝ որպես մտքերի և տեղեկությունների փոխանակում, հուզական արտահայտություն, սոցիալական ինտեգրում, իրականության կառավարում, ինքնուրույն մտածելու և արտահայտվելու կարողություն: Որպեսզի անձը կարողանա հաղորդակցվել այլ անձանց հետ, նա պետք է ունենա լայն, զարգացած և ճկուն բառապաշար: Անհատական զարգացման գործընթացում երեխայի բառապաշարի զարգացումը պայմանավորված է շրջապատող իրականության մասին երեխայի պատկերացումների զարգացմամբ: Երեխայի կողմից շրջապատող աշխարհի յուրացումը իրականացվում է խոսքային և ոչ խոսքային գործունեության ընթացքում իրական առարկաների ու երևույթների հետ անմիջական փոխհամագործակցության, ինչպես նաև մեծահասակների հետ հաղորդակցման միջոցով: Կարևորելով վերջինս՝ արդիական ենք համարում ներկայացնել մեծահասակի դերը երեխայի բառապաշարի զարգացման գործընթացում:

Սույն աշխատությունում փորձել ենք ամփոփել ծնողների կողմից առավել հաճախ տրվող հարցերի պատասխանները երեխայի բառապաշարի զարգացման վերաբերյալ: Այստեղ կարող եք գտնել տեղեկատվություն երեխայի բառապաշարի զարգացման, դրա փուլերի վերաբերյալ, ինչպես նաև գործնական խորհուրդներ և խաղեր երեխայի բառապաշարի զարգացման և հարստացման վերաբերյալ:

ԵՐԵԽԱՅԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Երեխայի բառապաշարի զարգացումը կապված է ինչպես մտածողության և հոգեկան գործընթացների (հիշողություն, ուշադրություն, ընկալում) զարգացման, այնպես էլ խոսքի բոլոր բաղադրիչների՝ ինչյունահնչութային և քերականական կառույցների զարգացման հետ:

Երեխան բառերի օգնությամբ անվանում է այն, ինչը հասկանում է: Դրա հետ կապված՝ երեխայի բառապաշարում ավելի շուտ են ի հայտ գալիս հստակ նշանակություն ունեցող բառերը, իսկ ընդհանրական բնույթի բառերն ի հայտ են գալիս ավելի ուշ:

Վաղ տարիքի երեխայի գործունեությունը իրականացվում է մեծահասակի հետ համատեղ, և դրա հետ կապված՝ հաղորդակցումը կրում է իրավիճակային բնույթ: Փոքր-ինչ ներկայացնենք նրա մասին, թե ինչպես կարող է մեծահասակը խթանել կամ խոչընդոտել երեխայի բառապաշարի զարգացումը:

Սկզբնական շրջանում, երբ երեխան գտնվում է նորածնային կամ մանկիկային փուլում, մեծահասակների հաղորդակցումը կրում է միակողմանի և հուզական բնույթ, երեխայի մոտ առաջանում է շփման մեջ մտնելու և իր պահանջմունքները արտահայտելու ցանկություն: Մեծահասակի խոսքին երեխան սկսում է արձագանքել նույնիսկ ասված խոսքի ինչերանգից սկսած, երեխան կարող է ի պատասխան ձայն արձակել, ժպտալ կամ լաց լինել: Այս կերպ մեծահասակը կարող է խթանել երեխայի մոտ շփվելու, հաղորդակցվելու ցանկության առաջացումը: Հետո աստիճանաբար երեխան գիտակցաբար ներառվում է խոսքային գործունեության մեջ, հաղորդակցմանը մասնակցում է լեզվի (որպես նշանային համակարգի) օգնությամբ: Այս փուլում երեխան սկսում է բացի ձայնից և հարալեզվական միջոցներից գործածել ինչյունախմբեր, իր ցանկությունը կարող է արտահայտել որոշակի ինչյունախմբերի միջոցով: Այնուհետև այդ ինչյունախմբերը վերածվում են բառերի: Ինչպե՞ս: Գալիս է մի ժամանակ, երբ մեծահասակը երեխայի համար

դառնում է ընդօրինակման առարկա: Երեխան ձգտում է նմանակել մեծահասակին, նմանակում է հնչերանգը, ձայնը, շարժուձևը, դիմախաղը: Երբ մեծահասակը փորձում է իմաստավորել երեխայի արտաբերած ցանկացած հնչյունախումբ և անվանել այնպես, ինչպես իրականում անվանվում է տվյալ երևույթը/առարկան, երեխան սկսում է փորձել այն անվանել այնպես, ինչպես մեծահասակը: Այսպես ձևավորվում են երեխայի առաջին բառերը:

Իհարկե, հարկ ենք համարում նշել, որ հետազոտությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ երեխան սկզբում անվանում է այն բառերը, որոնք կա՛մ կենսական նշանակություն ունեն, կա՛մ առավել հաճախ է լսում:

Սկզբում բառը կարող է ունենալ մի քանի նշանակություն: Միևնույն բառը կարող է նշել և՛ առարկա, և՛ առարկայի հետ կապված գործողություն, և՛ հատկանիշ: Բառն ուղեկցվում է որոշակի մեղեդայնությամբ, ժեստերով, որոնք հստակեցնում են դրա նշանակությունը: Բառի նշանակության հստակեցմանը զուգահեռ տեղի է ունենում նաև բառի նշանակության կառույցի զարգացում: Հայտնի է, որ բառը կարող է ունենալ իր կառույցով բարդ նշանակություն. մի կողմից բառը նշում է որոշակի առարկա, հարաբերակցվում է առարկայի կոնկրետ պատկերի հետ, մյուս կողմից բառն ընդհանրացնում է առարկաների, հատկանիշների, գործողությունների համակցություն: Բառի նշանակության վրա ազդում է նաև կապը այլ բառերի հետ:

Բառը նշանակության տարբեր երանգներ է ձեռք բերում՝ կախված համատեքստից:

Բառը տարբեր նշանակություն է ձեռք բերում նաև՝ կախված մեղեդայնությունից:

Ինչպես արդեն նշեցինք, խոսքի զարգացման վաղ փուլում բառի առարկայական հարաբերակցության վրա մեծ ազդեցություն է ունենում իրադրությունը, ժեստը, միմիկան, մեղեդայնությունը: Այսինքն՝ երեխան նոր բառ սովորելիս այն պետք է կապի որոշակի իրադրության, ժեստերի, միմիկայի կամ մեղեդայնության հետ: Ասել է թե՝ երեխան ստեղծում է զուգահեռներ բառի և տվյալ իրավիճակի միջև: Մեր փորձը ցույց է տալիս, որ երեխայի բառապաշար նոր

բառ ներմուծելիս այն պետք է երեխայի մոտ որևէ հուզական ֆոն ստեղծի: Այդ կերպ երեխաները ավելի շուտ են ըմբռնում բառը և փորձում են այն ավելի հաճախ գործածել:

Բառի հետ ծանոթացման սկզբնական փուլերում երեխան դեռ չի կարող յուրացնել բառը իր «մեծահասակային» նշանակությամբ: Դրա հետ մեկտեղ նկատվում է բառի նշանակության ոչ ամբողջական տիրապետման ֆենոմեն, քանի որ սկզբում երեխան բառը հասկանում է որպես կոնկրետ առարկայի անվանում, այլ ոչ թե որպես առարկաների դասի անվանում:

Ուշագրավ է այն փաստը, որ երեխան մեկ բառով միավորում է այն հատկանիշները, որոնք հոգեբանորեն առավել կարևոր են նրա համար տվյալ փուլում:

Աստիճանաբար երեխան մեծահասակների հետ հաղորդակցվելիս յուրացնում է նոր բառեր՝ հստակեցնելով դրանց նշանակությունը և շտկելով հին բառերի գործածումը:

Ստորև ներկայացնում ենք բառապաշարի զարգացման վերաբերյալ գրականության մեջ ընդունված նորմեր: Սակայն հարկ ենք համարում նշել, որ յուրաքանչյուր երեխա անհատականություն է, նա նման չէ այլ երեխաների, հետևաբար նրա զարգացումը ևս տարբերվում է այլ երեխաների զարգացումից:

1-2 տարեկանում երեխաները յուրացնում են բառեր՝ դրանք հարաբերակցելով միայն կոնկրետ առարկայի հետ: Բառերի անվանումները, այսպիսով, նրանց համար այնպիսի անձնանուններ են, ինչպես մարդկանց անունները:

Կյանքի երկրորդ տարվա վերջին երեխան յուրացնում է ընդհանրացման առաջին աստիճանի բառեր, այսինքն՝ սկսում է հասկանալ միատեսակ առարկաների, գործողությունների, որակների ընդհանրացված նշանակությունը:

3 տարեկան հասակում երեխան յուրացնում է ընդհանրացման երկրորդ աստիճանի բառեր, որոնք նշում են հասկացություններ, որոնք ընդհանրացված ձևով հաղորդում են առարկաների, գործողությունների, հատկանիշների անվանումներ:

Մոտավորապես 5 տարեկանում երեխաները յուրացնում են ընդհանրացման երրորդ աստիճանի բառեր (բույսեր՝ ծառեր, խոտեր, գույն՝ սև, սպիտակ):

Դեռահասային տարիքում երեխաները կարող են յուրացնել և իմաստավորել ընդհանրացման չորրորդ աստիճանի բառեր, ինչպիսիքն են վիճակ, հատկանիշ ցույց տվող բառերը:

Երեխայի կենսափորձի հարստացումը, իր գործունեության և շրջապատող մարդկանց հետ հաղորդակցման զարգացումը հանգեցնում է բառապաշարի աստիճանական քանակական աճին:

Այսպիսով, հոգեկան գործընթացների զարգացման (մտածողության, ընկալման, պատկերացումների, հիշողության), շրջապատող աշխարհի հետ շփման ընդլայնման, երեխայի զգայական փորձի ընդհանրացման, նրա գործունեության որակական փոփոխության հետ ձևավորվում է նաև երեխայի բառապաշարը՝ քանակական և որակական կողմերով:

Հաջորդիվ կներկայացնենք գործնական խորհուրդներ, խաղեր և առաջադրանքներ, որոնք կօգնեն ձեզ՝ զարգացնելու ձեր փոքրիկի բառապաշարը:

ՀԱՐՈՒՍՏ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Եթե մանկական հասակում երեխայի մոտ բացակայել է գղգղանքը (վանկերի բազմաքանակ կրկնություններ), և խոսել սկսել է ուշ (3 տարեկանից ուշ), և խոսքը բավարար չափով հասկանալի չէ, ապա անհրաժեշտ է երեխայի հետ այցելել լոգոպեդի: Նման խնդրի դեպքում երեխան խոսել սկսելուն պես սխալ է արտաբերում հնչյունների մեծ մասը: Երեխան կարող է արտասանելիս չավարտել բառերը կամ բառի մեջ թույլ տալ հնչյունների շփոթումներ (բանալի-բալանի, ծիրան-ծինար): Երեխան օգտագործում է պարզ և մեկ իմաստ արտահայտող, երբեմն նույնիսկ իմաստ չարտահայտող նախադասություններ: Խոսքի մեջ կարող են նկատվել տարբեր քերականական սխալներ, կարող է նկատվել ոչ բավարար բառապաշար:

Եթե թվում է, որ երեխայի խոսքը բավարար հասկանալի չէ շրջապատողների համար, ապա հարկ է պարզել՝ ինչ վիճակում է երեխայի՝

- բառապաշարը,
- խոսքի գրագիտությունը,
- խոսքի կառուցվածքը,
- խոսքի հասկացման մակարդակը:

Մենք կանգ կառնենք բառապաշարի հետազոտման և դրա զարգացման վրա:

Պետք է ստուգել երեխայի խոսքում բայերի, գոյականների, ածականների և կապերի բառապաշարը:

• Բայերի բառապաշար

Պետք է պարզել, թե ճի՞շտ է արդյոք անվանում իրեն ծանոթ գործողությունները (դուք կարող եք ինքներդ կատարել գործողություններ կամ ցույց տալ նկարների միջոցով, որոնց վրա պատկերված են գործողություններ, օրինակ՝ «մեքենան գնում է», «տղան

քնած է», «աղջիկը ուտում է» և այլն): Եվ այդ ժամանակ պետք երեխային հարցնել. «Ի՞նչ է անում մեքենան», «Ի՞նչ է անում տղան» և այլն:

Պետք է պարզել, թե երեխան արդյոք ճի՞շտ է անվանում այս կամ այն առարկայի հետ կապված գործողությունը: Օրինակ՝ «Ի՞նչ է անում ինքնաթիռը» (թռչում է), «Ի՞նչ է անում տղան» (ուտում է), «Ի՞նչ է անում լամպը» (վառվում կամ լուսավորում է) և այլն:

• Գոյականների բառապաշար

Պետք է պարզել, թե ճի՞շտ է արդյոք անվանում իրեն ծանոթ առարկաները: Օրինակ՝ սեղան, աթոռ, ծառ, ծաղիկ, ավտոմեքենա և այլն: Դուք ցույց եք տալիս երեխային առարկան կամ դրա նկարը, իսկ նա անվանում է այն:

Պետք է պարզել, թե ճի՞շտ է արդյոք երեխան անվանում իրեն ծանոթ կենդանիների ձագերին: Օրինակ՝ «Ի՞նչ են անվանում կովի ձագին» (հորթ), «Ի՞նչ են անվանում հավի ձագին» (ճուտ/ ճուտիկ), «Ի՞նչ են անվանում արջի ձագին» (քոթոթ) և այլն:

• Ածականների բառապաշար

Պետք է պարզել, թե երեխան ճի՞շտ է արդյոք անվանում գույները: Խնդրե՛ք երեխային ասել, թե ինչ գույն ունի տվյալ առարկան:

Պետք է պարզել նաև, թե երեխան ճի՞շտ է արդյոք անվանում առարկաների չափերը (երկար, բարակ, մեծ, փոքր, լայն, նեղ և այլն):

• Կապերի բառապաշար

Պետք է պարզել, թե երեխան ճի՞շտ է արդյոք օգտագործում կապերը: Օրինակ՝ հարցնում եք երեխային. «Որտե՞ղ է գրիչը» (սեղանի վրա, սեղանի տակ, տուփի մեջ և այլն):

Պետք է միշտ հիշել, որ գոյություն ունեն տարիքային առանձնահատկություններ, և, օրինակ, 3 տարեկան երեխան դժվար թե կարողանա ասել՝ տվյալ առարկան լայն է, թե նեղ:

Երեխայի բառապաշարն ամբողջությամբ ուսումնասիրելուց հետո, եթե կարծում ենք, որ ունենք բառապաշարը զարգացնելու, ընդլայնելու կամ ամրապնդելու կարիք, ապա զինվում ենք համբերությամբ և անցնում գործի: Երեխայի բառապաշարի զարգացումը, հարստացումը, ընդլայնումը այն միակ գործողությունն է, որը ցանկացած ծնող անում է ինքնաբերաբար: Երեխայի ծնվելուն պես մայրը, գրկելով երեխային, նրան շփման հնարավորություն է տալիս: Նույնիսկ երբ նորածնի հետ սկսում ենք խոսել, թվում է, թե նա ոչինչ չի հասկանում, սխալվում ենք, նա ամեն ինչ լսում և հասկանում է, ավելին՝ նա մեր արտաբերած բոլոր բառերը հավաքում և պահեստավորում է իր պասիվ բառապաշարում: Եվ որքան մենք շատ խոսենք երեխայի հետ, նա այնքան ավելի շատ պաշար կկուտակի հետագայում մեզ վերադարձնելու համար: Հաճախ ծնողները, այս մասին լսելով, ասում են, որ երեխայի հետ հնարավոր չէ անդադար խոսել, ինչ կարող է մեծահասակը այդքան խոսել փոքրիկ երեխայի հետ: Իրականում երեխայի հետ կարելի է խոսել ամեն ինչի մասին՝ ծառի, թփի, խաղալիքի, ուտելիքի, հագուստի, մի խոսքով, ամեն ինչի մասին: Մենք կարող ենք երեխային երկար պատմել թե ինչ է, օրինակ, ծառը, ինչ գույն ունի, ինչ հոտ ունի, ինչ ձև ունի, ինչ է դրա վրա աճում, այդ աճած տերևների կամ մրգերի հետ ինչ է լինում, ինչ գույն, հոտ, համ ունեն դրանք և այլն: Այս ամենը ինքնանպատակ չէ: Երբ մենք պատմում ենք երեխային որևէ իրի, առարկայի, երևույթի մասին, մենք նրան ծանոթացնում ենք շրջապատող աշխարհին՝ միևնույն ժամանակ զարգացնելով նրա պասիվ բառապաշարը: Շատ ծնողներ ասում են, որ անհնար է այդքան խոսել երեխայի հետ, երբ նա քեզ չի պատասխանում: Մենք կարող ենք խթանել նաև երկկողմանի հաղորդակցումը: Ինչպե՞ս: Սկզբնական ժամանակաշրջանում երեխայի փոխարեն կարող ենք խոսել մենք՝ ինքներս, օրինակ՝

– Ի՞նչ է սա:
– Լույս:
– Լո՞ւյս:
– Ի՞նչ է անում լույսը:
– Լուսավորում է:

– Ինչո՞ւ:

– Որ լուսավոր լինի, և մենք տեսնենք միմյանց:

Սա նման է մենախոսության: Բայց այս մենախոսության ժամանակ նույնիսկ ամենափոքրիկ երեխաների մոտ մենք կարող ենք նկատել դիմախաղի, շնչառության հայացքի փոփոխություն: Սա նշանակում է, որ նա մեզ լսում, հասկանում և արձագանքում է: Որոշ ժամանակ անց նա սկսում է յուրացնել և աստիճանաբար նաև գործածել արտաբերությամբ հեշտ ու պարզ այն բառերը, որոնք նա հաճախ է լսել և կուտակել իր պասիվ բառապաշարում:

ԻՆՉՊԵՍ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԵՐԵԽԱՅԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

- Խոսել երեխայի հետ անդադար և ամեն ինչի վերաբերյալ, նրան պատմել իրեն շրջապատող յուրաքանչյուր առարկայի, երևույթի մասին:
- Կազմակերպել երկխոսություն երեխայի հետ:
- Թույլ տալ երեխային արտահայտվել:
- Ստեղծել վստահության մթնոլորտ կամ, այլ կերպ ասած, շահել երեխայի վստահությունը:
- Շատ պատմել հեքիաթներ:
- Շատ արտասանել երեխայի համար բանաստեղծություններ, քառյակներ:
- Երեխայի համար կարդալ այնպիսի գրքեր, որոնցում մեծ, գունավոր և հետաքրքիր պատկերներ կան, որոնք կգրավեն երեխային:
- Երեխայի հետ շատ խաղալ:
- Խոսելիս, խաղերի ընթացքում շատ կիրառել դիմախաղ, ժեստեր, ձայնի ելևէջներ և այլն:
- Մշտապես ոգևորել երեխային և ընդգծել նրա հաջողությունները:

«Ընդհանրացում»

Նպատակը՝ երեխաների խոսքում ամրապնդել ընդհանրացնող հասկացությունները:

Անհրաժեշտ պարագաներ՝ Լոտո:

Խաղի ընթացքը՝ Երեխաներին առաջարկում ենք լոտո, որը կազմված է 6 վանդակների բաժանված մի քանի քարտերից: Մեծ քարտի վանդակներից մեկում պատկերված է ելակ, երկրորդում՝ վարունգ, երրորդում՝երիցուկ, չորրորդում՝ խնձոր և այլն: Առանձին փոքրիկ քարտերի վրա պատկերված են տարբեր հատապտուղներ, մրգեր, բանջարեղեն: Ցույց տալով երեխաներին փոքրիկ քարտը՝ հարցնում ենք. «Ո՞ւմ է պետք այս քարտը», երեխաները համապատասխանաբար պատասխանում են. «Ինձ է պետք այդ քարտը: Ես բանջարեղեն եմ հավաքում» և այլն: Հաղթում է նա, ով ավելի շուտ կծածկի իր քարտը՝ միաժամանակ ոչ մի սխալ թույլ չտալով պատասխաններում:



«Անվանի՛ր կենդանուն և ասա՝ ինչ ձայն է հանում»

Նպատակը՝ ամրապնդել կենդանիների տարբերակումը և անվանումները, հարստացնել բառապաշարը:

Անհրաժեշտ պարագաները՝ տուփ՝ լի կենդանիների պատկերներով կամ խաղալիքներով:

Խաղի ընթացքը՝ տուփի միջից հանում ենք խաղալիք (նկար) և հարցնում ենք, թե ինչ կենդանի է: Երեխան պատասխանում է՝ կով: Այնուհետև հարցնում ենք, թե ինչ ձայն է հանում, և երեխան պատասխանում է՝ մո՛ւռ:

Սկզբում երեխան կարող է չիմանալ: Այդ ժամանակ օգնում ենք երեխային և խնդրում, որ կրկնի: Հետագայում խնդրում ենք, որ երեխան առանց օգնության անվանի կենդանիներին և արտաբերի տվյալ կենդանու ձայնը:

«Խաղ հանելուկներ»

Նպատակը՝ երեխաների ակտիվ բառապաշարում ընդլայնել գոյականների բառաշարքը:

Անհրաժեշտ պարագաներ՝ խաղալիքներ:

Խաղի ընթացքը՝ երեխաների առջև սեղանի վրա դրվում են մի քանի խաղալիքներ՝ գորտ, աքաղաղ և այլն, այնուհետև արտահայտիչ ընթերցվում են հանելուկ բանաստեղծություններ:

– Եկավ կարմիր քուրքը հագին,
Ճտերն հաշվեց դռան տակին: *(Աղվես)*

– Հազար ասեղ փեշից կախ,
Ման է գալիս թաղից թաղ: *(Ոզնի)*

– Աչքերը հառած ու նստած՝
Գեղեցիկ խոսում է,
Մեծ-մեծ թռչում է,
Մարդավարի լողում է: *(Գորտ)*

«Ընտրի՛ր նկարը»

Նպատակը՝ առարկայի հատկանիշները նշանակող բառերի գործնական յուրացում:

Անհրաժեշտ պարագաներ՝ առարկայական նկարներ:

Խաղի ընթացքը՝ Լոգոպեդը կարդում է բառեր, երեխաներն ընտրում են համապատասխան նկարները.

– Բարձրահասակ, նիհար, պուտավոր... *(ընձուղտ)*
– Բրդոտ, ծուռթաթ... *(արջ)*
– Քաղցած, մոխրագույն, չար... *(գայլ)*

– Վառ, տաք... *(արև)*

«Բռնի՛ր և ասա՛»

Նպատակը՝ սովորեցնել երեխաներին ճիշտ գործածել ներկա ժամանակ, եզակի թիվ, 3-րդ դեմքի բայերը:

Անհրաժեշտ պարագաներ՝ գնդակ:

Խաղի ընթացքը՝ երեխաները շրջան են կազմում: Խաղավարը, գցելով երեխաներին գնդակը, անվանում է կենդանու կամ մասնագիտության անուն: Երեխան, բռնելով գնդակը, հետ է նետում խաղավարին և ասում կենդանու կատարած գործողությունը:

Օրինակ՝

Շուն - շունը հաչում է, թռչկոտում է, ոսկոր է ուտում, վազում է, կծում է և այլն:

Բժիշկ - բժիշկը բուժում է:

«Հրաշալի պարկ»

Նպատակը՝ ամրապնդել բանջարեղենի անվանումներն ու նրանց գույները:

Անհրաժեշտ պարագաներ՝ պարկ, բնական բանջարեղեն կամ բանջարեղենի մուլյաժներ, բանջարեղենի պատկերով առարկայական նկարներ:

Խաղի ընթացքը՝ խաղից առաջ երեխային ցույց են տալիս տարատեսակ բանջարեղեն և ծանոթացնում նրանց հատկություններին: Երեխաները հերթով «հրաշալի պարկից» հանում են բանջարեղենը և անվանում այն: Այնուհետև խաղավարը տալիս է հարցեր յուրաքանչյուրի բանջարեղենի ձևի, տեսքի, գույնի, հատկանիշների վերաբերյալ, և երեխաները պետք է պատասխանեն. յուրաքանչյուր ճիշտ պատասխանի դեպքում ստանում են այդ բանջարեղենի պատկերով առարկայական նկար: Հաղթում է նա, ում մոտ եղած նկարները գերակշռում են:

«Հետ նետել գնդակը և անվանել կենդանիներին»

Նպատակը՝ ընդլայնել բառապաշարը, զարգացնել ուշադրությունը և հիշողությունը:

Անհրաժեշտ պարագաներ՝ գնդակ:

Խաղի ընթացքը՝ խաղավարն անվանում է ընդհանրացնող հասկացությունը (օրինակ՝ վայրի կենդանիներ, ընտանի կենդանիներ) և գնդակը հաջորդաբար նետում երեխաներից յուրաքանչյուրին: Երեխան, հետ նետելով գնդակը, պետք է անվանի այդ ընդհանրացնող հասկացություններին դասվող մասնավորեցնող հասկացություններ:

Օրինակ՝

Վայրի կենդանի - առյուծ, ընձուղտ, վարազ, վագր, լուսան, եղնիկ և այլն:

Ընտանի կենդանի - կատու, խոզ, կով, գառ և այլն:

«Գտի՛ր սխալը»

Նպատակը՝ հստակեցնել և ամրապնդել բանջարեղենի և մրգերի անվանումները և դրանց մասին պատկերացումները, բառապաշարի ընդլայնում և հստակեցում:

Անհրաժեշտ պարագաներ՝ Անգետիկի մեծ նկար, երկու զամբյուղ, որոնցից մեկի մեջ կլինեն մրգեր և մի քանի հատ բանջարեղեն, իսկ մյուսի մեջ՝ բանջարեղեն և մի քանի միրգ, այդ ամենը կարելի է իրականացնել նաև առարկայական նկարների միջոցով:

Խաղի ընթացքը՝ երեխաների առջև կանգնած է Անգետիկը, նրա երկու կողմերում զամբյուղներ են՝ մեկում բանջարեղեն, մյուսում մրգեր: Երեխան պետք է գտնի, թե ինչ սխալ է թույլ տվել Անգետիկը:

«Դասավորել նկարները»

Նպատակը՝ բառապաշարի զարգացում

Դիդակտիկ նյութ՝ պահանջվող պարագաների նկարներ

Խաղի ընթացքը՝ Երեխաներին առաջարկում են մի շարք խառը նկարներ: Այդ նկարները պետք է դասավորի ըստ համընկնումների՝

Բանջարեղեն և մրգեր

Ընտանի և վայրի կենդանիներ

Ընտանի և վայրի թռչուններ

Կահույք և սպասք

Հագուստ և կոշիկ:

Եվ տա դրանց անվանումները:





«Անվանի՛ր մեկ բառով»

Նպատակը՝ գործնական ճանապարհով զարգացնել երեխաների բառապաշարը, մասնավորապես առարկաների ընդհանրացնող և առանձին անունները:

Դիդակտիկ նյութերը՝ կահույքի տեսակների, կենդանիների տեսակների, հագուստի տեսակների նկարներ կամ խաղալիքներ:

Խաղի ընթացքը՝ երեխաներին տալիս ենք առարկաների նկարները կամ խաղալիքները և խնդրում հագուստները դնել աջ կողմում, կահույքը՝ ձախ կողմում, կենդանիները՝ մեջտեղում, այնուհետև հանձնարարում ենք անվանել ամեն նկար կամ խաղալիք և ասել՝ որտեղ է դնելու:



Երևան
2017